**Հավելված 5**

**«ԷԱՃԱՊՁԲ ՔԱԿ-ԷԱՃԾՁԲ-04/2021 »* ծածկագրով**

**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ՔԱԿ-ԷԱՃԾՁԲ-04/2021-1**

ք. Երևան

____/___________/2021թ.

« Քաղաքացիական ավիացիայի կոմիտե »-ը ի դեմս Գլխավոր քարտուղար Միքայել Զալինյան ի, որը գործում է « Քաղաքացիական ավիացիայի կոմիտե »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և « ՎԱՌՄ ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Ռուզաննա Առաքելյան ի, որը գործում է « ՎԱՌՄ ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՔԱԿ-ԷԱՃԾՁԲ-04/2021 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:6

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային

գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 480498.00 AMD(չորս հարյուր ութսունհազար չորս հարյուր իննսունութդրամ ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:7 17

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:8

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:921Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են

ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը* [5]:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին` տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները` փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11[6]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են

բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

13[8]

_

_

8. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ** **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**Քաղաքացիական ավիացիայի կոմիտե**

**Զվարթնոց օդանավակայան**

**ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**

**900011207082**

**01204231**

**--------------------------------**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

ZALINYAN MIKAYEL 1310880573

Digitally signed by ZALINYAN MIKAYEL 1310880573
DN: c=AM, sn=••••••••, givenName=•••••••, serialNumber=64f465f76d88, cn=ZALINYAN MIKAYEL 1310880573
Date: 2021.06.04 12:03:37 +04'00'

**ՎԱՌՄ ՍՊԸ**

**Տիգրան Մեծ 48, 43**

**Արդշինբանկ**

**2472303727050000**

**00488698**

**--------------------------------**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by ARAKELYAN RUZANNA 5512790064
Date: 2021.05.31 19:40:09 AMST

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

17[6]*Կիրառվում է, եթե կնքվում էնախագծայինփասաթղթերիքաղաքաշինականփորձաքննության ծառայություններիմատուցմանպայմանագիր*

[17]*Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[8]*Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուիև Կատարողիմիջև համաձայնեցված չափով:Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապասույն կետըհանվումէնախագծից:*

[9]*Եթեպայմանագիրըկնքվելէ«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապատուգանքըհաշվարկվումէայնիհամաձայնագրիգնինկատմամբ, որի շրջանակումարձանագրվելէստանձնվածպարտավորությունների չկատարմանկամոչպատշաճկատարմանիհանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի*

*նկատմամբ:*

[10]*Պետականբյուջեիմիջոցներիհաշվինպարտավորություններչառաջացնող գնումներիդեպքումսույննախադասությունըպայմանագրիցհանվումէ:*

[11] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[12]*Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[13]*Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/____________/2021թ. կնքված
ՔԱԿ-ԷԱՃԾՁԲ-04/2021 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | |
|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | 79821200/33 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Թղթապանակ | Թղթապանակ գրպանով, գրպանիկի բարձրությունը` 12մմ, երկարությունը` 20.5սմ, լայնությունը` 12սմ, գրպանիկը և թղթապանակը պետք է լինեն մեկ թղթից կազմված (այսինքն` գրպանիկը չլինի առանձին պատրաստված և կպցրած թղթապանակին), դիմերեսին` ոսկեգույն ՀՀ զինանշան (40 մմ տրամագծով), տեքստը` ոսկեգույն տառերով : Թուղթը 320-350 գ/մ2 խտությամբ, կավճապատ, կարմիր գույնի դեկորատիվ թղթից, նախատեսված A4 ձևաչափի թերթերի համար: Թղթապանակի չափսը փակ վիճակում` (225x310)մմ: |
| 2 | 79821200/34 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 1 | Ծրար` (360-365*275-280) մմ ձևաչափի, անթափանց, եռանկյունաչափ փակվող, գույնը` մուգ դարչնագույն, օվսեթային խիտ թղթից` նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, կռաֆթ փաթեթավորման: (շեղումը մինչև |

| | | | |
|---|---|---|---|
| | | | +/-5մմ) |
| 3 | 79821200/35 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 2 | Ծրար՝ (325-330*235-240)մմ ձևաչափի, անթափանց, եռանկյունաչափ փակվող, գույնը՝ մուգ դարչնագույն, օվսեթային խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, կռաֆթ փաթեթավորման: (շեղումը մինչև +/-5մմ) |
| 4 | 79821200/36 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 3 | Ծրար՝ (235-240*185-190)մմ ձևաչափի, անթափանց, եռանկյունաչափ փակվող, գույնը՝ մուգ դարչնագույն, օվսեթային խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, կռաֆթ փաթեթավորման: (շեղումը մինչև +/-5մմ) |
| 5 | 79821200/37 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 4 | Ծրար՝ (165-170*130-135)մմ ձևաչափի, անթափանց, եռանկյունաչափ փակվող, գույնը՝ մուգ դարչնագույն, օվսեթային խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, կռաֆթ փաթեթավորման: (շեղումը մինչև +/-5մմ) |
| 6 | 79821200/38 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Օրացույց սեղանի | 2022 թ-ի համար հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, շաբաթական օրացույց /օրգանայզեր, ամուր կազմով, ռուսերեն/անգլերեն լեզուներով, կազմի վրա Ընկերության լոգոտիպի, իսկ տակդիրի վրա հասցեի տպագրությամբ: Էջերի քանակը առնվազն 120, յուրաքանչյուր էջի վրա լինի բաշխվածություն ըստ ժամերի նշումների տեղ և եռամսյակային օրացույց: Չափսերը՝ փակ վիճակում 100x320մմ, էջերը և կազմերը 4+4 տպագրությամբ: |
| 7 | 79821200/39 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Օրացույց | 2022թ.-ի համար օրացույց պատի եռամսյակային շարժական օրանիշով, հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, բաղկացած 4 մասից, փաթեթավորված թափանցիկ պոլիեթիլենի ծրարում: Յուրաքանչյուր մասի լայնությունը 35սմ, երկարությունը 22սմ չափսի: 1-ին մասի թղթի հաստությունը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 500գ/մ գունավոր թեմատիկ դիզայնով ֆոտոտպագրությամբ, Ընկերության լոգոտիպի և հասցեի տպագրությամբ: 2-րդ մասի էջերը կազմված են 2022թ. հունվարից մինչև 2022թ. դեկտեմբեր ամիսը ներառյալ, բախկացած է 12 էջից , 3-րդ մասի էջերը կազմված են 2022թ. հունվարրից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ, բախկացած է 12 էջից և 4-րդ մասի էջերը կազմված են 2022թ. հունվարից մինչև 2023թ. հունվար ամիսը ներառյալ, բախկացած է 13 էջից, յուրաքանչյուրի վրա գունավոր տպագրությամբ ամսական օրացույց: |
| 8 | 79821200/41 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Գրասենյակային գիրք | Գիրք-մատյան Տպագրությունը 5 տեսակ Կազմը ստվարաթուղթ 1500 գ/մ (բունվինիլապատ) ստվարաթուղթ սև գույնի, Թելակար 7-րդ կազմ, անյունները երկաթյա անկյունակներով: Էջերի քանակը 200 էջ: էջերի գրառումը ՀՀ կառավարության 30.12.1997թ. թիվ 626-կգ որոշմամբ հաստատված հրահանգի: |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Քաղաքացիական ավիացիայի կոմիտե** | **ՎԱՌՄ ՍՊԸ** |
| **Հասցե՝ Զվարթնոց օդանավակայան** | **Հասցե՝ Տիգրան Մեծ 48, 43** |
| **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** | **Արդշինբանկ** |
| **900011207082** | **2472303727050000** |
| **01204231** | **00488698** |
| **Գլխավոր քարտուղար Միքայել Զալինյան** | **Ռուզաննա Առաքելյան** |
| ___________ | ___________ |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

ZALINYAN MIKAYEL 1310880573

Digitally signed by ZALINYAN MIKAYEL 1310880573
DN: c=AM, sn=••••••••, givenName=•••••••, serialNumber=64f465f76d88, cn=ZALINYAN MIKAYEL 1310880573
Date: 2021.06.04 12:05:01 +04'00'

Digitally signed by ARAKELYAN RUZANNA 5512790064
Date: 2021.05.31 19:39:52 AMST

Հավելված N 2

____/____________/2021թ. կնքված

ՔԱԿ-ԷԱՃԾՁԲ-04/2021 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | հասցեն | Ժամկետը** |
| հատ | 900.00 | 45000.00 | 50 | ՀՀ ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ | Պայմանագրի կնքումից սկսած 20 օր: |
| հատ | 249.99 | 24999.60 | 100 | ՀՀ ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ | Պայմանագրի կնքումից սկսած 20 օր: |
| հատ | 249.99 | 49999.20 | 200 | ՀՀ ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ | Պայմանագրի կնքումից սկսած 20 օր: |
| հատ | 200.00 | 30000.00 | 150 | ՀՀ ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ | Պայմանագրի կնքումից սկսած 20 օր: |
| հատ | 150.00 | 22500.00 | 150 | ՀՀ ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ | Պայմանագրի կնքումից սկսած 20 օր: |
| հատ | 1500.00 | 60000.00 | 40 | ՀՀ ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ | Պայմանագրի կնքումից սկսած 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | օր: |
| հատ | 3499.98 | 139999.20 | 40 | ՀՀ ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ | Պայմանագրի կնքումից սկսած 20 օր: |
| հատ | 9000.00 | 108000.00 | 12 | ՀՀ ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ | Պայմանագրի կնքումից սկսած 20 օր: |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

| | |
|---|---|
| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
| **Քաղաքացիական ավիացիայի կոմիտե** | **ՎԱՌՄ ՍՊԸ** |
| **Հասցե՝ Զվարթնոց օդանավակայան** | **Հասցե՝ Տիգրան Մեծ 48, 43** |
| **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** | **Արդշինբանկ** |
| **900011207082** | **2472303727050000** |
| **01204231** | **00488698** |
| **Գլխավոր քարտուղար Միքայել Զալինյան** | **Ռուզաննա Առաքելյան** |
| ___________ | ___________ |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

ZALINYAN MIKAYEL 1310880573

Digitally signed by ZALINYAN MIKAYEL 1310880573
DN: c=AM, sn=•••••••••,
givenName=•••••••,
serialNumber=64f465f76d88,
cn=ZALINYAN MIKAYEL 1310880573
Date: 2021.06.04 12:13:37 +04'00'

Digitally signed by ARAKELYAN RUZANNA 5512790064
Date: 2021.05.31 19:39:40 AMST

Հավելված N 3
____/____________/2021թ. կնքված
ՔԱԿ-ԷԱՃԾՁԲ-04/2021 ծածկագրով պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 1 | 79821200/33 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Թղթապանակ | | | | | | | | | | 45000.00 | 45000.00 | 45000.00 | 45000.00 |
| 2 | 79821200/34 | այլ պոլիգրաֆիական ար | | | | | | | | | | 24999.60 | 24999.60 | 24999.60 | 24999.60 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | տադրանքի տպագրման ծառայություն Ծրար 1 | | | | | | | | | | | | | |
| 3 | 79821200/35 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 2 | | | | | | | | | | 49999.20 | 49999.20 | 49999.20 | 49999.20 |
| 4 | 79821200/36 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 3 | | | | | | | | | | 30000.00 | 30000.00 | 30000.00 | 30000.00 |
| 5 | 79821200/37 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 4 | | | | | | | | | | 22500.00 | 22500.00 | 22500.00 | 22500.00 |
| 6 | 79821200/38 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Օրացույց սեղանի | | | | | | | | | | 60000.00 | 60000.00 | 60000.00 | 60000.00 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 79821200/39 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Օրացույց | | | | | | | | | 139999.20 | 139999.20 | 139999.20 | 139999.20 |
| 8 | 79821200/41 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Գրասենյակային գիրք | | | | | | | | | 108000.00 | 108000.00 | 108000.00 | 108000.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Քաղաքացիական ավիացիայի կոմիտե** | **ՎԱՌՄ ՍՊԸ** |
| **Հասցե՝ Զվարթնոց օդանավակայան** | **Հասցե՝ Տիգրան Մեծ 48, 43** |
| **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** | **Արդշինբանկ** |
| **900011207082** | **2472303727050000** |
| **01204231** | **00488698** |
| **Գլխավոր քարտուղար Միքայել Զալինյան** | **Ռուզաննա Առաքելյան** |
| ___________ | ___________ |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

ZALINYAN MIKAYEL 1310880573

Digitally signed by ZALINYAN MIKAYEL 1310880573
DN: c=AM, sn=••••••••, givenName=•••••••, serialNumber=64f465f76d88, cn=ZALINYAN MIKAYEL 1310880573
Date: 2021.06.04 12:14:56 +04'00'

Digitally signed by ARAKELYAN RUZANNA 5512790064
Date: 2021.05.31 19:39:22 AMST

Հավելված N 4
____/___________/2021թ. կնքված
ՔԱԿ-ԷԱՃԾՁԲ-04/2021 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________ | հհ ______________ |
| հվհհ ______________ | հվհհ ______________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`

______________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «_________________» 20__թ.
Պայմանագրի համարը` ՔԱԿ-ԷԱՃԾՁԲ-04/2021-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «______________» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները`

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման | Թղթապանակ գրպանով, գրպանիկի բարձրու | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծառայություն Թղթապանակ | թյունը՝ 12մմ, երկարությունը՝ 20.5սմ, լայնությունը՝ 12սմ, գրպանիկը և թղթապանակը պետք է լինեն մեկ թղթից կազմված (այսինքն՝ գրպանիկը չլինի առանձին պատրաստված և կպցրած թղթապանակին), դիմերեսին՝ ոսկեգույն ՀՀ զինանշան (40 մմ տրամագծով), տեքստը՝ ոսկեգույն տառերով: Թուղթը 320-350 գ/մ2 խտությամբ, կավճապատ, կարմիր գույնի դեկորատիվ թղթից, նախատեսված A4 ձևաչափի | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | թերթերի<br>համար: Թ<br>ղթապան<br>ակի<br>չափսը<br>փակ վիճ<br>ակում՝ (2<br>25x310)մմ<br>:() | | | | | | | |
| 2 | այլ պոլիգ<br>րաֆիակա<br>ն արտադ<br>րանքի տ<br>պագրման<br>ծառայությ<br>ուն Ծրար<br>1 | Ծրար՝ (36<br>0-365*275<br>-280) մմ ձ<br>և աչափի,<br>անթափա<br>նց, եռանկ<br>յունաչափ<br>փակվող,<br>գույնը՝<br>մուգ դարչ<br>նագույն, օ<br>վսեթային<br>խիտ<br>թղթից՝ նա<br>խատեսվ<br>ած գաղտ<br>նիություն<br>պարունա<br>կող նամա<br>կների<br>համար,<br>կռաֆթ փ<br>աթեթավո<br>րման:<br>(շեղումը<br>մինչև<br>+/-5մմ)() | | | | | | | |
| 3 | այլ պոլիգ<br>րաֆիակա<br>ն արտադ<br>րանքի տ<br>պագրման<br>ծառայությ<br>ուն Ծրար | Ծրար՝ (32<br>5-330*235<br>-240)մմ ձ<br>և աչափի,<br>անթափա<br>նց, եռանկ<br>յունաչափ | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2 | փակվող, գույնը՝ մուգ դարչ նագույն, օ վսեթային խիտ թղթից՝ նա խատեսվ ած գաղտ նիություն պարունա կող նամա կների համար, կռաֆթ փ աթեթավո րման: (շեղումը մինչև +/-5մմ)() | | | | | | | |
| 4 | այլ պոլիգ րաֆիակա ն արտադ րանքի տ պագրման ծառայությ ուն Ծրար 3 | Ծրար՝ (23 5-240*185 -190)մմ չ աչափի, անթափա նց, եռանկ յունաչափ փակվող, գույնը՝ մուգ դարչ նագույն, օ վսեթային խիտ թղթից՝ նա խատեսվ ած գաղտ նիություն պարունա կող նամա կների համար, կռաֆթ փ աթեթավո | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | րման: (շեղումը մինչև +/-5մմ)() | | | | | | | |
| 5 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 4 | Ծրար` (165-170*130-135)մմ ճևաչափի, անթափանց, եռանկյունաչափ փակվող, գույնը` մուգ դարչնագույն, օվսեթային խիտ թղթից` նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, կռաֆթ փաթեթավորման: (շեղումը մինչև +/-5մմ)() | | | | | | | |
| 6 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Օրացույց սեղանի | 2022 թ-ի համար հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, շաբաթական օրացույց / օրգանայզեր, ամուր | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կազմով, ռուսերեն/անգլերեն լեզուներով, կազմի վրա Ընկերության լոգոտիպի, իսկ տակդիրի վրա հասցեի տպագրությամբ: Էջերի քանակը առնվազն 120, յուրաքանչյուր էջի վրա լինի բաշխվածություն ըստ ժամերի նշումների տեղ և եռամսյակային օրացույց: Չափսերը՝ փակ վիճակում 100x320մմ, էջերը և կազմերը 4+4 տպագրությամբ:() | | | | | | |
| 7 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման | 2022թ.-ի համար օրացույց պատի եռամսյակայ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծառայություն Օրացույց | ին շարժական օրանիշով, հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, բաղկացած 4 մասից, փաթեթավորված թափանցիկ պոլիեթիլենի ծրարում: Յուրաքանչյուր մասի լայնությունը 35սմ, երկարությունը 22սմ չափսի: 1-ին մասի թղթի հաստությունը 500գ/մ գունավոր թեմատիկ դիզայնով ֆոտոտպագրությամբ, Ընկերության լոգոտիպի և հասցեի տպագրությամբ: 2-րդ մասի էջերը կազմված | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | են 2022թ. հունվարից մինչև 2022թ. դեկտեմբեր ամիսը ներառյալ, բախկացած է 12 էջից , 3-րդ մասի էջերը կազմված են 2022թ. հունվարրից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ, բախկացած է 12 էջից և 4-րդ մասի էջերը կազմված են 2022թ. հունվարից մինչև 2023թ. հունվար ամիսը ներառյալ, բախկացած է 13 էջից, յուրաքանչյուրի վրա գունավոր տպագրությամբ ամսական օրացույց:( ) | | | | | | |
| | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Գրասենյակային գիրք | Գիրք-մատյան Տպագրությունը 5 տեսակ Կազմը ստվարաթուղթ 1500 գ/մ (բունվինիլապատ) ստվարաթուղթ սև գույնի, Թելակար 7-րդ կազմ, անյուններըերկաթյա անկյունակներով: Էջերի քանակը 200 էջ: Էջերի գրառումը ՀՀ կառավարության 30.12.1997թ. թիվ 626-կգ որոշմամբ հաստատված հրահանգի:() | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| | |
|---|---|
| **Ծառայությունը հանձնեց** | **Ծառայությունն ընդունեց** |
| ______________________________ | ______________________________ |
| **ստորագրություն** | **ստորագրություն** |
| ______________________________ | ______________________________ |
| **ազգանուն, անուն** | **ազգանուն, անուն** |

Կ.Տ. Կ.Տ.

Հավելված N 4.1
____/___________/2021թ. կնքված
ՔԱԿ-ԷԱՃԾՁԲ-04/2021 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Քաղաքացիական ավիացիայի կոմիտե -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ՎԱՌՄ ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող)
միջև 20__թ.______________________________ -ին կնքված N ՔԱԿ-ԷԱՃԾՁԲ-04/2021-1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. __________________________-ին հանձնման-ընդունման նպատակով
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Թղթապանակ | հատ | |
| այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 1 | հատ | |
| այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 2 | հատ | |
| այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 3 | հատ | |
| այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ծրար 4 | հատ | |
| այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Օրացույց սեղանի | հատ | |
| այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Օրացույց | հատ | |
| այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն | հատ | |

| Գրասենյակային գիրք | | |
|---|---|---|

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

_______________________________________

**ազգանուն, անուն**

____________________________________

**Ստորագրություն**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________________________

**ազգանուն, անուն**

_____________________________________

**Ստորագրություն**